ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

ՔԱՐՎԱՃԱՌԻ ԷԹՆԻԿ ԴԻՄԱԳԾԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պատմական Քարվաճառի գավառը Հայաստանի պատմամշակութային հուշարձաններով հարուստ շրջաններից է[1]: Քարվաճառի տարածքը պատմական Հայաստանի թեև համեմատաբար պակաս ուսումնասիրված շրջաններից է, սակայն գրավոր մատենագրության մեջ պահպանված վկայությունները գումարվելով վիմագիր արձանագրությունների պարունակած փաստումներին, որոշակի լույս են սփռում տարածքի ինչպես սոցիալ–տնտեսական, մշակութային ու քաղաքական իրադարձությունների ընթացքին, այնպես էլ ամուր կռվաններ են էթնիկական պատմության խնդիրների հետազոտման համար: Գրավոր սկզբնաղբյուրներում գավառը հիշատակվում է «Վայ/կ/ունիք», «Ծար», «Քարվաճառ» (Քեալբաջար) և այլ անվանումներով[1.1], որ պայմանավորված է հավանաբար տարբեր պատմական ժամանակաշրջաններում գավառի կյանքում կարևոր դեր ստանձնած նրա կենտրոնատեղիի փոփոխություններով: Վաղ միջնադարում նրա սահմանը արևմտյան մասում անցնում էր Սևանի ավազանը Տրտուի ակունքներից բաժանող Ռմբոստյան լեռնաշղթայով, հյուսիսային մասում՝ Մռավի լեռնաշղթայի հյուսիսային լանջերով, հարավում՝ Աղահեջքի (Քաշաթաղ, Լաչին) լեռնաշղթայով, իսկ արևելքում ընդգրկում էր Դաղի վանքը, Լեռնաբերդ (Հավքախաղաց) սարն ու Խաթրավանքը (Վաղուհաս գյուղից արևմուտք): Գավառի տարածքում էին գտնվում «Բաղանիք արքունականքը», կամ, ինչպես վկայված է սկզբնաղբյուրներում՝ «Վայկունիք ջերմուկք»–ը, որը նույնացվում է հանրահայտ Ջերմուկի (թուրք.՝ Իսթի սու), հետ: Այս գավառը օտար հարձակումներից Հայաստանի համեմատաբար լավ պաշտպանված միջնագավառներից էր և ամուր հենարան՝ հայոց արևելից կողմերում անկախ իշխանության գոյության

համար: Գավառը, կարևորագույն ռազմավարական դիրք գրավելով շրջակա տարածքների նկատմամբ, իր վրա էր հրավիրել նաև նվաճողների ուշադրությունը և պատահական չէ, որ պատմական ու մշակութային մեծ անցյալ ունեցող այդ տարածքը և, ի վերջո, հայաթափ էր արվել վերջին երկու դարերի ընթացքում:

4–րդ դարում այն գտնվում էր հայոց պետականության ոլորտում և հայոց Արշակ երկրորդ թագավորի դեմ ապստամբած գավառների թվում Փավստոս Բուզանդը հիշում է նաև «ամուր գաւառն Արծսխայ»:

Պապ թագավորի գահակալման տարիներին սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը դաժան հաշվեհարդար է տեսնում բոլոր ապստամբների հետ և այդ թվում, ինչպես հաղորդում է Փավստոսը, «հարկանէր զերկիրն Արծախայ մեծաւ պատերազմաւ, գերէր բազումս ի նոցանէն և զմնացորդացն առնոյր պատանդս և մնացեալսն ի հարկի կացուցանէր»:

Հայոց և Աղվանից թագավորությունների վերացումով և մարզպանությունների ստեղծումով Արցախը ներառվում է Պարսից իշխանությունների կողմից ստեղծված ու ձևավորված Աղվանից մարզպանության մեջ և սկսում կարևոր դեր խաղալ նրա քաղաքական ու մշակույթային կյանքում (կրելով հաճախ նաև Աղվանք անվանումը), մնալով սակայն հայկական ու հայաշունչ տարածք:

«Աշխարհացույց»–ի մեջ գավառը հիշատակվում է Մեծ Հայքի տասներորդ նահանգ Արցախի կազմում: «Տասներորդ [աշխարհ] Արցախ յերի կալով Սիւնեաց, ունի գաւառս երկոտասան. զՍեւսն Հաբանդ, զՎայկունիս, զԲերդաձոր, զՄեծ–Առանս, զՄեծ–Կուանս, զՀարճլանս, զՄուխանս, զՊիանս, զՊարսականս, զՔուստի, զՓառնէս, զԿողթ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»[2]:

Արդեն 6–րդ դարի վերջերին, որպես «քաղաքագետ» է հիշատակվում Վայկունիք — Ծարի արևմտյան եզրին գտնվող Սաւդը: Այն գտնվում էր Դվին–Պարտավ և Նախիջևան–Պարտավ բանուկ ճանապարհին: Ուշագրավ է, որ այդ ուղին էին ընտրել նաև բյուզանդական ու պարսից արքունիքների հետապնդումից խույս տվող հայ նախարարներ Ատատ Խորխոռունին և Սամուել Վահևունին իրենց զորքերով[3], որոնք «զօրօքն իւրեանց ...գնացին ընդ քաղաքագեղն կոչեցեալ Սաւդայ, հասանեին յաշխարհն Աղո-

ւանից, ի Հոնս դէմս արարեալ, և անցեալ ընդ գետովն որ կոչի Կուր՝ բանակէին առ գետեզերբն»[4]: Այս շրջանից արդեն Վայկունիքը հիշատակվում է որպես իշխանանիստ կենտրոններից մեկը, որի տերերն էին Գեղամայ գավառը ևս բռնությամբ գրաված Սահլ Սմբատյանը («որ էր ի տոհմէն Հայկայ՝ տէր Սիւնեաց») և նրա ժառանգները[5]:

9–րդ դարում Գեղամա լճից արևելք ընկած տարածքները եղել են Հայաստանի առավել ապահով վայրերը, որի մասին են վկայում 893թ. գրված հիշատակարանում պատմվող Մաշտոց Եղիվարդեցու համառոտ կենսագրության տողերը. «Սա ի տոհմէ քահանայական, ի գեղջէն Եղէվարդայ, ի ժառանգաց մենաստանաց, որ անուամբ Սրբոյն Թէոդորոսի էր: Եւ ի զարանալ բռնակալութեանն տաճկաց ի վերայ գաւառին, ելեալ հայրն նորա ի տիս մանկութեան, և գնաց պանդխտութեամբ ի գաւառին Սոթից, և անդ կացեալ և ամուսնացեալ, ծնաւ զգեղեցիկ աղաւնին Քրիստոսի, զոր պատմել սկիզբն արարեալ եմ, հանդերձ եւ այլ եղբարք և քերբք: Ապա ուսուցանելով զորդիսն իւր՝ յարելով յուսումն աստուածային, քանզի և ինքն քահանայ էր: Յետոյ ի վախճանելն նորա յարեցաւ մանուկն Մաշթոց ի կրաւնատրս և աջողեալ նա ի ձեռն կրաւնատրազգեցի, որոյ անուն կոչի Թէոդորոս: Վարժեցաւ և հմուտ եղև գրոց սբբոց և նոցին աստուածազգեցող զաւրութեանցն ի կրաւնաստանին, որ կոչի Մաքենոցք, ի գաւառին Գեղարքունիք, և ընկալաւ զաստիճան քահանայութեան»[6]: Նույն դարում գավառը հիշատակվում է իշխանանիստ Վայունիք կենտրոնի անունով: Մովսես Կաղանկատվացին նշում է, որ «Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու (Հանդաբերդ–Պ. Չ.) և զապարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր և բաղանիք արքունականք են»[7]: Ատրներսեհն ունեցել է երկու որդի՝ Գրիգոր և Ապուսեթ: Այժմյան Մեծ Մազրա գյուղի հին գերեզմանատանը պահպանվել է Ատրներսեհի որդու՝ Գրիգորի, կողմից կանգնեցված բազալտե խաչքար հետևյալ արձանագրությամբ. «ՅԼ (881) թվականութեանս հայոց ես՝ Գրիգոր Ատրներսեհեան Սիւնեաց եւ Աղվանից իշխան կանգնեցի զսուրբ Նշանս աւգնական հաւատացելոց, որք երկրպագէք սուրբ խաչիս Քրիստոսի, զիս յաղաւթս յիշեսցիք»[8], որին վերագրվում է նաև Հավքախաղաց բերդի կառուցումը՝ «շինէ զՀաւախաղացին բերդն և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն...»[9]:

Արդեն 11–րդ դարի սկզբից սկզբնաղբյուրներում գավառը սկսում է հիշատակվել «Ծար» անվանումով: 1006թ. Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը սահմանում է Սյունյաց հոգևոր թեմի տիրույթները. «Հատանէ և զսահման Աղուանից Ըռմբի խոռն՝ Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի Քարավազին կամուրջն...»[10]: Ըստ ականատես Գրիգոր Մագիստրոսի նկարագրության. «Ասեմ քեզ ի մերում սեփականին իսկ՝ յԱղուանն աշխարհի, յաւանն կոչեցեալ Ծար, եւ ահա ոչ ծեքաբանեմ քեզ, մակաբուսեալն վաղնջուց գեղեցկուղէշն գի, յորմէ սիւնս ոչ սակաւ՝ հզօրս եւ ստուարս ի կոչարանում անդ տեսեալ մեր, և գերանք գերակատարք և երկայնածիգք՝ որ է վկայարան սրբոյն Յակովբայ: Ամենայն կահք տաճարին գերակայ՝ տախտակք, և խոյակք, և խարիսխք, և զթակաղակք, և զդրունս, և զսեամս հանդերձ բարավորօք, և ներքոյ զատակս կազմեալ ի միոջէ ծառէ յայնմանէ գիոյն գոլ ասեն զնա և զայլս ոմանս ի նոյն աշխարհին ընդարձակագոյն սրահք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր, որ գրեթէ այսպիսի ոչ այլ ուրէք՝ բայց միայն ի թագաւորեալ քաղաքին»[11]:

Վայունիք — Ծարը այնուհետև ընդգրկված ենք տեսնում Խաչենի միասնական իշխանության կազմում: 11–12–րդ դարերում նա դիմագրավում է սելջուկյան արշավանքներին ու Գանձակում հիմնավորված Շեդադյան ամիրայության ոտնձգություններին՝ շարունակելով նշանակալի դեր խաղալ հայոց քաղաքական ու մշակութային զարգացման մեջ: Սելջուկների կողմից Գանձակի գրավումից և Շադադյանների իշխանությունը վերացնելուց հետո (1086թ.) քաղաքի կառավարիչ էին նշանակվում սուլթանական արքունիքի անդամները: 12–րդ դարի կեսերին Գանձակում քաղաքագլուխ կարգված Խուհստուդտին ապստամբեց սուլթան Մասուդի դեմ, իսկ ապստամբությունը ճնշելու համար Պարսկաստանից ժամանած Չոլի զորապետը ապստամբների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո արշավում է նաև Արցախ, և, ըստ Սիսիթար Գոշի վկայության, 1145թ. «էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց եկեղեցիսն և այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն և գերեաց զզօրականսն...»[12]:

Ուշագրավ է, որ հաջորդ տարին ևս վերադառնալով Այսրկովկաս, Չոլի ամիրան կրկին արշավում է «ի կողմն Խաչինոյ, Տանձեաց և Աղախայ, քանզի յառաջանում նուագին ոչ մնացին ընդ ձեռամբ նորա դղեակք այնոքիկ, զորս էառն, այլ սակաւ ինչ,

մնացեալքն յազատացն անտի, որք էին ղողեալք յանտառս մայրեաց, առին դարձեալ զբերդ–ամրոցսն իւրեանց և դարձեալ ապստամբութեամբ վարէին ընդ տաճկացն»[13]: Չոլի ամիրապետը փորձում է վրեժխնդիր լինել, սակայն չկարողանալով գրավել ամրոցները, բավարարվում է գավառների ավերումով ու հրկիզմամբ. «զառաքելադիր ուխտ սրբութեանն, որ կոչի Դաղու վանք», ապա հեռանում է և գնում «յաշխարհն Մարաց»:

Հետաքրքրական մի ավանդություն է պահպանվել Դաղի վանքի հիմնարկության վերաբերյալ: Վանական վարդապետի «Այլ բան ասացեալ Վանական վարդապետին» թղթում, որտեղ ասվում է. «Դաղիում յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք և ի կողմանս հիւսիսոյ, և լուեալ զմահն Աբգարու և դարձեալ եմուտ ի Փոքր Միւնիս և կրաւնատրեալ անդէն ծածկաբար վախճանեցաւ և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ...»[14]:

12–րդ դարի երկրորդ կեսին Ծար գավառը գտնվել էր Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Հասանի տիրապետության ներքո: 1182թ. Վախտանգ Սակառի որդին՝ Հասանը, որ տերն էր «Հաթերո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հաւախաղացին», Դաղի վանքում գտնվող խաչքարի վրա թողած արձանագրության մեջ հաղորդում է, «կացի յաւագութեան ամս Խ(40) շատ պատերազմաւ և յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն աստուծոյ, և եղեն ինձ Զ(6) որդի, զբերդերս եւ զգաւառս ետու նոցա եւ եկի ի վանքս յիմ եղբայրս՝ ի տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնատր... ՈԼԱ (1182) թուիս»[15]:

Հայաստանում Զաքարյանների տիրապետության շրջանում Ծար գավառի տիրակալները ևս ենթարկվում էին Զաքարյաններին: Նույնիսկ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում Ծար գավառի տեր Գրիգոր Մեծ իշխանը շարունակում էր ենթակա լինել աթաբեկ Իվանէի որդի Ավագին և նրա ղեկավարության ներքո էլ մասնակցել է դեպի Կարին ու Կեսարիա մոնղոլների կատարած արշավանքին[16]: Հավանաբար այդ ժամանակ Սողքը, այն է՝ Սևանա լճի արևելյան ափը, ընդգրկված էր Ծարի իշխանության կազմում և այդ է ամենայն հավանականությամբ այն պատճառը, որ Վարդանի Աշխարհացույցում բացատրվում է, թե «Սոթից գավառ Ծարա երկիրն է»[17]:

1227–1228թթ. խորեզմշահի վեզիր Շարաֆ ալ–Մուլքը, հարկերի հավաքման նպատակով արշավում է Առան և ապա կանգ առնում «Խաչեն բերդի մոտ, որտեղ գտնվում էր Ջալալ ադ Դինը՝ Իվանե Զաքարյանի (Իվանե ալ–Կուրջի) քրոջ որդին: Շարաֆ ալ–Մուլքը սկսեց սպառնալ և ահաբեկել նրան մինչև համաձայնության եկան հաշտվել՝ պայմանով, որ նրան կվճարեն տաս հազար դինար բերբերի և կազատեն յոթ հարյուր գերի մուսուլմանների, որոնք գերվել էին վաղուց կամ վերջին ժամանակներում: Նրանց մեջ կային և այնպիսիները, որոնց գերել էին դեռևս մանուկ հասակում, իսկ գերությունից ազատվում էին արդեն ծերացած»[18]:

Ծար բնակավայրը, ըստ Ստեփաննոս Օրբելյանի բերած եկեղեցական հին հարկացուցակի, վճարում էր 15 հարկաչափ, որը մնացած բնակավայրերի համեմատությամբ բավական բարձր թիվ էր և վկայում է 13–րդ դարում նշված բնակավայրի մեծության մասին[19]:

Պատմելով 1250 թվականին Ծարում սկսված մի շարժման մասին, որն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր տեղի բուժիչ ջրերով բժշկվելու համար մեծաքանակ ժողովրդի այցելություններով և անձնավորված էր Դավիթ Մոլորեցուցիչ անվան հետ, Կիրակոս Գանձակեցին գրում է. «Գիւղ մի է ի սահմանս Գեղարքունւոյ ծովուն, ի կողմ Խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր ջերմուկն է՝ Ծար անուն: Ի նմա էր այս այր ի չքաւորաց և ի տնանկաց, պահէր զջրաղաց նոցա և յայնմանէ կերակրէր ինքն և կին իւր և որդիք...»: Դավիթը սկսում է բժշկել տարբեր հիվանդություններ ունեցող այցելուների, որով և ձեռք է բերում մեծ համբավ: Օգտագործելով իր համբավը, Դավիթը սկսում է քարոզել, ինչպես Կ. Գանձակեցին է հաղորդում, «Քրիստոս երևեցաւ ինձ և ասաց. թե՝ դարձո զաշխարհս և բժշկութիւնս կատարեա»: Եւ յարեցան ի նա, արարին խաչ բարձրաբերձ և կանգնեցին զնա ի դուռն եկեղեցւոյն և զենին նմա զուարակս և տային ի մսոյն և յոսկերաց զուարակին և ի տաշեղէ խաչին և ի հատէ կորեկոյն... որպէս նշխարս օրհնութեան ամենայն ուխտականացն»... Ծար ավանի այցելուները հետզհետե բազմապատկվում էին, որոնք «զնային բազում պատարագօք՝ ոսկով և արծաթով և զուարակաւ և ոչխարօք»: Ուշագրավ է Կիրակոս Գանձակեցու հաղորդումը այն մասին ևս, թե՝ «տէր գեղջն, քանզի պարսիկ էր, առնոյր զբա-

ժին իւր յընչիցն, քանզի յոյժ բազումս տանէին և յօժարութեամբ տային»: Չբավարարվելով դրանով, Դավիթը հայտարարում էր նաև, թե «յԱրշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդւոց իմոց լինել միոյն թագաւոր և միւսոյն՝ կաթողիկոս»: Թե որքան մեծ ծավալ էր ընդունել այս շարժումը, երևում է Դավիթի և նրան հարած կամ այցելած մարդկանց դեմ հարուցված հալածանքներից: Նզովքի ու բանադրանքի նամակներ են գրել ժամանակի մեծ հեղինակություն ունեցող Վանական վարդապետը Խարանաշատից, ինքը՝ Կիրակոս Գանձակեցին, Հաղպատի առաջնորդ Համազասպ եպիսկոպոսը: Այն ժամանակ, երբ Դաղի վանքի Գրիգոր եպիսկոպոսը, Վարդան վարդապետը «բազում քահանայիւք» ժամանում են Ծար և վարձում կործանել Դավթի կանգնեցրած խաչը, «յարեաւ ամենայն ամբոխ բազմութեանն որովք և բրովք, կամէին սպանանել զնոսա» — գրում է Կիրակոս Գանձակեցին: Ուշագրավ է, որ Դավիթը, ի վերջո, հեռանում է Ծար այցելած մի խումբ գառնեցիների հետ, որոնք այդ միջոցին վերադառնում էին «ի մեծ դրանէն»[20]:

1267 թվականին է վերաբերում մի վավերագիր, որը պահպանվել է հետագա ընդօրինակությամբ. «Ի ՉԺԶ թուին հայոց և յամի տեառն 1267 կամաւն ամենակալին աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Այս գրիս մեր գիրն է իշխանական հրամանի:

Ես Տուրսունս, Մեյսիս, Պռոշս, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր յազգէն Տոփիեացն մեծ իշխանաց իշխանին, զայս հաստատ սիկիլս տուաք Աւագ եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուէլ աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԽաթի վասն, զԳետամիջի վասն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապանց մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի վանորայքս մարդ չկայր, որ յառաջ կայր և շէն պահէր և զեկեղեցիս լուսաւորէր, յայս պատճառէս զայս սուրբ աթոռնին ի նոքա ապսպարեցաք, և զերկու իշխանութիւնն, որ է եպիսկոպոսութիւն և պարոնութիւն էլ հենց ի նոսա յանձնեցաք և ի նորոգութիւն սուրբ աթոռոյս և սահման ժառանգութեամբ նոցա գիւղօրայս, ագարակս, այգիս, ջրաղացս յանձնեցաք, ով որ գործ ածէ, տասանորդն տան յիչեալ վանորէիցն Ապահէն, Խութ, Խազինակն, Չափարան, Քոնչի աղբիւրովն, թաղանանց գետովն: Պետրոսապակ, որ մեր պապերն տուեալ են, Սոխանանց, Ծովատեղին, Ջաջուռանց, Չովբեկեանց,

Ցրտնօտն, Շիրմանանց, Գրիգորաքաղ, Հիրանանց Հակառուկաբերդովն, Նավի աղբիւրովն, Բերդաքարովն, Կռապաշտուցովն, Ողնովն, Խոչենակայ մեծ այգին, Մանանաձորովն, Ծաղիկանց, Եգնարածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճոճատոր էր, այսինքն՝ ազգական, քանի որ իւր պետք է ինքն վարէ, աստուծով ազատ է: Իսկ թէ այլ մարդ վարէ՝ տասնորդն առնու ու տայ վանքին, անպատճառ: Այս եղև մեր ուխտ առաջի աստուծոյ և սուրբ Տաթի առաքելոյն: Արդ, ով որ զկնի մեր այս վախմխաթերս այլայլէ·կամ խլէ թէ յորդւոց և թոռանց մերոց և ազգայնոց, իցէ առաջի աստուծոյ պարտական և սևերես լինի, ՅԺԸ հայրապետաց նզոված է և Կայենի և Յուդայի դասակից, իսկ թէ այլ ազգաց կամ թուրքաց իցէ՝ իւր հալալն հարամ լինի և իւր փէհղամբարէն ապիզար լիցի, ամէն»[21]:

1328 թվականին գրված հիշատակարանում խոսվում է Լևայ վանքին տրված մի ավետարանի մասին, որի պատվիրատուն էր Ռուզուքանը[22] 16–րդ դարի հիշատակարաններից մեկում Ծար երկրանվանը զուգահեռ գործածվում ենք տեսնում նաև Վակունիս գավառանունը: Լենկ Թեմուրի արշավանքների շրջանում (1387թ.), գրված այդ ձեռագրի գրիչը, ասում է. «նախ հալածվելով փախա Վակունիս գաւառ, ապա Ղարաբաղ, Ծափանիս գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Ծար»[23]: Որքան էլ Ծարը պաշտպանված էր օտար թշնամիների անակնկալ հարձակումներից շրջակա հայաբնակ գավառներով, այնուամենայնիվ նա ևս չէր կարող զերծ մնալ թշնամու ավերածություններից: Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղէտից» երկում, որ գրված է 1422թ., Լենկ Թեմուրի 1387թ. արշավանքի նկարագրության առիթով նշվում է.

Այլ և զՀասանն Ծարեցին
Երեք որդւովքըն զենեցին,
Զի զնոցին ամուրն առին
Եւ զբազումս գերեցին...
Եւ զԿապուտից ամուրն առին,
Եւ չորս հարիւր անդէն սպանին,
Եւ յԵրևան մեծ աւանին
Արս հինգ հարեւր կոտորեցին[24]:

Ժամանակագրական կարգով հետևելով Ծար երկրամասի պատմությանը, ականատես ենք լինում մի ուշագրավ իրողության:

15–րդ դարի սկզբից սկզբնաղբյուրներում հանդես է գալիս նաև Քարավաճառ տեղանունը, նախ որպես գյուղանուն, ապա և, որպես գավառանուն: 15–17–րդ դարերում, որպես գավառանուն դեռևս շարունակում է գործածվել նաև Ծարը: Այսպես, 1402թ. գրիչ Թովմա Սյունեցին գրում է. «Եւ կատարեցաւ սայ ի թուականութեանս հայկազեան տաւմսրի ութհարիւրերորդի յիսներորդի առաջներորդի ամի, ի հայրապետութեանն հայոց և Աղուանից երկոցունց տէրանց Կարապետք կոչեցելոց, զոր այսպէս պատահեցան ի մերումս ժամանակի՝ անուանակիցք գոլ միմեանց և յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս տէր Զաքարիայի Դաղի վանուց վերատեսչի, ի հռչակաւոր երկիրս Ծար, ի գեղս Քարավաճառ, ընդ հովանեաւ սրբոցս, որ ի սմա...»[25]: Ծար գավառի պատմության համար կարևոր վկայություններ են պահպանվել 1411թ. արտագրված ճաշոցի հիշատակարանում. «Գրեցաւ և զրաւ առեալ աւարտեցաւ աստուածամեծար սուրբ գիրքս ի թուաբերութեան հայկազեան տօմարիս ՊԿ (1411), ի թագաւորութեան Յուսուֆին, ի հայրապետության հայոց տէր Կարապետի և յԱղուանից՝ նորին անուանակից տէր Կարապետի և յեպիսկոպոսութեան նահանգիս աթոռոյն Աղդէի՝ տէր Զաքարիայի և յիշխանութեան տեղւոյս պարոն Վահրամայ, պարոն Տուրսունին, պարոն Շրուանին, պարոն Սասւօյին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին, յաստուածաշէն երկիրս Ծար կոչեցելոյ, ի վանս Գետամէջ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոց նշանացս... ամէն: Յիշատակ եղիցի և ի սմա հանգուցեալ իշխանացն այսմ նահանգի... նախ մեծաշուք իշխանին Հասանայ որդւոյ Դօբին և ամուսնոյն իւրոյ Խոնճային և զաւակացն իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շրուանին, նաև թագազարմ իշխանին Սադունին, զոր տէրն տէրանց և թագաւորն՝ ընդ սրբոց թագաւորացն և բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պսակեսցէ զնոսա, ամէն:

Յիշատակ եղիցի և ի սմա ազատացն տանս Դաւբեան, նախ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթապակին և այլ ամենայն ազատացն: Նաև յիշել ի տէր զամենայն տանուտեարսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Զազիկ... Գրեցաւ սուրբ տառս ձեռամբ Սիւնեցի Թովմա գրչի, ի խնդրոյ Յովհաննէս քահանայի»[26]:

Ծար գավառի գրչության կենտրոններից 15–17–րդ դարերում առանձնապես հայտնի էին Գետամիջոյ և Դաղի վանքերի գրչատները: Գետամիջոյ վանքում արտագրված Ավետարաններից մեկը ունի հետևյալ հիշատակարանը. «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մտերիմ և անընդաբոյս և ամենայն առաքինութեամբ զարդարեալ տեսականաւն և գործնականաւն՝ Թովմայի կուսակրաւն աբեղայի, ի թուականութեանս հայկազեան տումարի ՉԵ (1456), ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յովհանիսի որդոյ մեծի իշխանին հայոց պարոն Ջալալին, և յաշխարհակալութեանն արեանարբու բռնաւորին Ջհանշայի, ի սուրբ և ի հռչակաւոր վանքս Գետամիջոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և Մարդաղօնեաց սուրբ Ստեփանոսիս, և այլ բազմութեան սրբոց»[27]: Գետամիջոյ ուխտը ուշագրավ կարգավիճակով է հիշատակվում 15–րդ դարի մեկ այլ հիշատակարանում. «Ի ժամանակիս յայսմիկ, որ վասն ծովացեալ մեղաց ի վտանգի կայր ազգն քրիստոնէից ազգէն անօրինաց, և էր թուականն հայոց ՉԻԲ (1473), և ողիմբիաթն, որ է նահանջ ՍԼ (230), ի դանութիւն Հասան–բէկին որ գնաց յաշխարհն Հոռոմաց և ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց, և ի կաթողիկոսութեան հայոց տէր Ռաստակեսի, և ի հայրապետութեան սուրբ ուխտին Գետամիջոյ տէր Սարգսի, և փակակալութեան տեղւոյն Յովհաննէս կուսայկրաւն աբեղայի: ...Գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի, սուրբ Սքանչելագործ Նշանիս, սուրբ Սարգսի, և ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: ...Գրեցաւ սուրբ Աւետարանս...ի խնդրոյ արքեպիսկոպոսի... պարոնտէր, թողութիւ արարէք, եղանակիս, որ գրեցաւ՝ անձրեւ խիստ և տեղիքս՝ գէճ և հողս՝ ջրքաշ, և ես՝ մենակ»[28]: Նույն դարի մի արձանագրությունից երևում է, որ երկրի ամայությունից դրդված Դովյաններն իրենց կալվածքների մի մասը հանձնում են Դաղի վանքում, Խաթրի վանքում և Ծարի Գետամիջում նստող իրենց ազգականներին, «զի վանաւրայքս մարդ չկար, որ յառաջն կայր և չէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր, յայս պատճառէս երես դրաք և զայս սուրբ աթոռնին ի նոցա ապսպրեցաք և զերկու իշխանութիւն, որ է եպիսկոպոսութիւն և պարոնութիւնն էլ հենց ի նոսա յանձնեցաք»[29]:

16–րդ դարում Ծարի իշխանութիւնը շարունակում էր զորեղ լինել և ապաստան ծառայել թուրք–պարսկական պատերազմների թատերաբեմից և Արևմտյան Հայաստանում մոլեգնող հալածանքներից ու սովից փախչող բնակչության համար: Հայսմավուրքի հիշատակարանում նշվում է, թե «եւ գնացեալ փախստական ոմն ի Հռոմաց տունն, ոմն՝ ի Թուրքստան և ոմն՝ ի Գուրջըստան...և մեք միաբանաւ ընդ բազմացն փախուցեալ և ազատեցաք... և եկեալ Վերին Գեղամայ դարիպ և աւտարական և հասաք շրջագայութեամբ ի յաստուածապահ յամուրն Ծար: Եւ կամեցողութեամբն իշխանաց տեղոյն պարոն Միրզաջանին և Դաւստիբեկին և հոգևոր մարդն իմ Բէկաղին և Գաւզալաղին, բնակեցաք ի վանքս Գետամէջ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին...»[30]:

1568 թ.Վակունիս երկրի Արախիշ գյուղում Կարապետ աբեղան ընդօրինակել է երկու ավետարան /ՄՄ, ձեռ. 2537 և 4181/: 1570 թվականին է վերաբերում հետևյալ հիշատակարանը. «Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան հայոց ՌԺԹ /1570/ ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի կաթողիկոսի ի յաթոռն Գանձասարայ և ի ղանութեան շահ Թամազին որդոյ շահ Իսմայելին. արդ գրեցաւ ի գաւառս Վակունիս, ի գիւղս, որ կոչի Հովատուս, որ Հընկուզակս անուանի, ի տուսս՞ սուրբ եկեղեցւոյ, որ է մասն Պանտալեոն բժշկի և մասն տապանակի և Մեռկեռիոսի զինուորի և Ակոբա և Ըստեփանոսի Նախավկայի: Արդ գրեցաւ ձեռամբ Հայրապետ աբեղայի ձուլ՞ և անարժանի: Յիշատակ և ինձ և եղբարս իմ Նահապետ քահանային անջինջ յիշատակ և փրկութիւն հոգոյ՛ մերոյ և ծնողաց մերոց. հորն մերոյ Խասիկին և մորն մերոյ Հոմանին և եղբարցս Կոստանտին և Թորոսին...»[31]:

16–րդ դարում չնայած տարածաշրջանում տիրող քաղաքական անկայուն վիճակին Ծար գավառում և, մասնավորապես Դաղի վանքում, շարունակվում էր մշակութային կյանքը, ստեղծվում էին նաև մատենագրական երկեր: Հովհաննիսիկ Ծարեցու կազմած ժամանակագրության մեջ մեծ հարգանքով խոսվում է մեկ այլ նշանավոր Ծարեցու մասին. «սույն թուականի /1583/ եղև վախճանք մեծ և երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհաննիսի: Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ, Փոքր Միւնիս կոչեցելոյ, ի վանիցն Դաղիու սուրբ յառաքելոյն, որդի յումեմն ազատի և բարեբարոյի Ջհանշահ կոչեցելոյ, յազգէ Դօփեայ և Հասանայ: Եւ էր նայ յա-

շակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախպատեցոյ, յոյժ սրբասէր և աստուածասէր...յոյժ ընթերցասէր և գրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել յիւրն յիշատակ և այլ սպասք և զարդ եկեղեցոյ յոլով: Եւ յալեորեալ լի յաւուրքք հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ի յունուար ամսոյ Ի /20/ ի ՌԼԲ /1583/ թվականիս մերոյ, որոյ պատուական մարմինն նորա եդեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գեւղն Վասակաշէն, հուպ տամպարանի վարդապետն Սարգսի»[32]:

17–րդ դարի սկզբին, թուրք–պարսկական պատերազմների տարիներին, ծանր իրավիճակ էր ստեղծվել նաև Ծարում և շրջակա գավառներում: 1606 թ. Գեղարքունիքում գրված հիշատակարաններից մեկում հանգամանորեն նկարագրվում են այդ տարիների իրադարձությունները: Հիշատակելով շահ Արաս Առաջինի հրամանով կատարված բռնագաղթի մասին և արձանագրելով, թե իբր Արաքսի գետանցման ժամանակ «ոչ ոք վնասեցօ խնամովն աստուծոյ», միաժամանակ գրիչ Դավիթ եպիսկոպոսը ստիպված էր արձանագրել նաև, թե «յայնմհետէ ոչ ոք գտաւ հանգիստ աշխարհի»: «Յորժամ հեռացաւ շահն երկրէս հայոց, արձակեցան անողորմ ազգն Աւսմանին ի վերայ մնացելոցն երկրին Գեղամայ, որ ոչ կարացին տանել ազգն պարսից, որ անխնայաբար և անկարելի հարկս պահանջէին ատուրս ձմերայնոյ, որ ոչ կարացին ժուժել: Եհաս խապարս Ամիրգօնա խանին, որ էր ի ամուրն Երնջակայ, և նա առաքեաց ի զօրաց իւրոց զոմն Դատաբէկ անուն ի վերայ Մաւլմայղանի որդւոյն, որ տիրէր երկրիս Գեղամայ, և եկեալ կոտորեաց զամենեսեան ի գիւղն Կոթ: Եւ այսմն պատճառի յոխս կալաւ ի վերայ երկրիս ազգն Աւմարին: Յորժամ եղև գարուն, այս բարէմիտ և իմաստուն իշխանս պարոն Մէլիք Շահնազարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «եկայք մտցուք յամուրս, զի մի լիցուք կոխան այլազգեաց» և ինքն գնաց ի Ծար և Տպել[33]: Եւ որք զհետ նորա գնացին, զերծան ի սրոյ և ի գերութենէ այլազգեաց: Եւ յետ սակաւ աւուրց ելին զօրքն Գանջայու ի վերայ Գեղամայ երկրիս, զոմանս կոտորեցին, և զոմանս գերեցուցին Գ/3/ անգամ, թողին մեծ սուք և կսկիծ մեզ ամենեցուն: Ազգ մի ի սոցանէ եկին ի Լոռոյ, և մնացեալքն սոցանէ՝ նոքա գերեցին և կոտորեցին»[34]: Հիշատակարանի հիման վրա կարող ենք պնդել, թե Ծարը զերծ էր մնացել թուրքական զորքերի ներխուժումից, իսկ տեղական իշխողները շարունակել են մնալ

հայ տիրակալները: Այդ պնդումը հաստատվում է մասնավորապես Հաթերքի համար: 1620 թ. ավետարանի գերությունից ազատողը եղել է հենց Հաթերքի «իշխան և տէր» Հովհաննեսը. «Դարձեալ յիշեցէք զպարոնտէր Յոհաննէս, որ է իշխան և տէր Հաթերքոյ, բազում աշխատութեամբ ազատեաց զսուրբ Աւետարանս ի ձեռաց այլազգեաց ի քաղաք Գանձայ: Յիշեցէք... իւր ծնօղաց պարոնտէր Արիստակիսին, պարոն Խանումխաթունին, և եղբորն՝ պարոն Ղալաբեկոյն, և պարոնտէր Յոհաննիսին և կողակցին՝ պարոն խաթունաղին և որդւոյն՝ պարոն Եաւրիբէկին, և դստերացն՝ պարոն Խանփարուն, պարոն Նազլուխանին, Ղամարսուլթանին և պարոն Զիլփիխանին, պարոն Ղալաբէկին կնոչ պարոն Խանսուլթանին, և որդոցն՝ Պայընդիւրբէկին և Թաճումաղին»: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ պարոնտէր իշխան Հովհաննեսը անվարձահատույց վերադարձրել է Ավետարանը նրա նախկին տերերին, այն է՝ «պարոնտէր Վարդանի ձեռօք»... «ի գաւղն, որ կոչի Գաւառ, ընդ հովանեաւ Ս. Սարգսին և Ս. Յովհաննիսին»[35]: Նույն թվականներին մեկ այլ ձեռագիր՝ Քարոզգիրք է նվիրվել Ծարայ վանքին. «...արդ ...տեսանք, որ մեծ Զաքարեա պարոնատէրն առեալ էր Քարոզագիրքս խիստ փափականօք, Ծարայ վանքին և սուրբ Աստուածածնին դռան յիշատակ և վախմ իաք (՞) Աւետիսինն այ: ՉՌ (6000)-ի էր առել. անօրինաց ձեռն գերի էր ընկել. մեր մեծ Զաքարեա պարոնտէր առէլ են ժամանակին, որ շահ Սափին բազում զօրօք Էրէվանա բերդին կո (վ)ում էր հետ աւսմանլվին, բարի շատ քրիստոնեալք կորեցան թվին ՌՁ (1631)»[36]:

Ծար գավառի վանքերում ու մենաստաններում աշխուժություն էր տիրում նաև 17-րդ դարի երկրորդ կեսին՝ Սիրզախան բեկի մելիքության և Պետրոս Խանձքեցու Աղվանից կաթողիկոսության տարիներին: Այնտեղ շարունակում էին արտագրվել ձեռագրեր, որոնց մի մասը պահպանվել են տարբեր հավաքածուների մեջ: Այսպես, մեզ հասած ավետարաններից մեկը ունի հետևյալ հիշատակարանը. «Ի թվին ՌՃԲ (1653) ստացաւ զսուրբ աւետարանս հեզհոգի Թադևոս էրէցն ի հալալ ընչից իւրոց, բարի յիշատակ հոգւոյ իրոյ և ծնողացն, որ էր նա բնական ի յերիէն Մաղաւզայ, ի գեղջէն Ռախիշոյ, որ և ազդմամբ չարին փախստեա եղեալ, բնակեցաւ ի յերկիրս Ծարա(յ), ի գեօղն Մոս: Եւ առաջնորդութեան ի յայսմ նահանկի զտէր Ստեփաննոս արհիեպիսկոպոսն և ժրաճան

հովիւն: Եւ էր սպասաւոր ի սբ. Դադի վանիցն և Մարդաղոնեաց ս. Նշանին: Եւ զի էր երաշխաւոր և հոգացող ի տէր Թադէոսին՝ հոգևոր, այլ մարմնաւոր: Աստուած զինքն անփորձ և անսասան կենօք պահեսցէ ի յաթոռի իւրում մինչև ի խորին ծերութիւնն»[37]:

Վերոհիշյալ Ստեփաննոսի առաջնորդության տարիներին (1647թ.) Դադի վանքում ոմն Մովսէս երեց վերանորոգել է 1490թ. մի Ավետարան և թողել չափածո հիշատակարանը.

«ի թուականիս հայկականի
Երեք քառեակքն հարիւրին,
Տասն տասնեակքն պակասի,
Եւ ի չորիցն ստորադասի (1647)
Ի ժամանակքս պարսքկի,
Ի Փոքր Ապազ շահ թագաւորին,
Ի հայրապետքն Աղվանի,
Տէր Պետրոսի արհի հսկողին:
Ի սրբազան հանճարեղի,
Եւ նորընծայ կաթողիկոսին,
Եւ առաջնորդն Ըստղաթէի,
Ստեփաննոսի արհիեպիսկոպոսին,
Եւ սպասաւոր ըզՍ. Խաչի,
Մարդն աղաւնեաց Ս. Նշանի:
Նորոգեցաւ յայսմ տառի,...
Ձեռամբ փծուն մեղսամածի,
Եւ ի չնչին քարտօղարի,
Եւ լոկ անուամբքն յիրիցուի,
Մովսէս տրուպ զանարժանի,
Որ եմ բնական ի յերկքրի,
Ձուգածորոյն ի Գորիսի,
Եւ եմ բնակեալ յօտար երկրի
Եւ ի յերկիրքն Ծարայի:
Մայրաքաղաքքն Սոթէի,
Զի եմ ծառայ սբ. Մաշտոցի,...
Ի խընդրելոյ սըրբպմըտի,
Անուամբ կոչեալն Երեմիայի,
Հեզահոգի և բարելի,
Աստուածահաճոյ միայնակեցի»[38]:

Այլ ձեռագրով շարունակված է Ավետարանի հիշատակարանը և նշված, թե՝ «Եւ արդ հիշեցէք զսրբամիտ Եղկարան, որ էր նա յերկրէս Ծարայ, ի գեղջէն Հոսաբակայ և ջերմեռանդ սիրով ետ գրել զՅայսմաւուրքն... Եւ թողեալ զտուն իւր և զամենայն ինչ և ելեալ գնաց յանապատ: Եւ յետ տարւոյ միոյ և երկու եկեալ ի մայրաքաղաքս Սոթ, վասն նորոգելոյ զԱւետարանս և ետ նորոգել յոյժ փափագանօք...»[39]:

Վերոհիշյալ Ավետարանի նորոգող Մովսեսը 1652 թ. արտագրել, ծաղկել ու կազմել է մի Ծարակնոց, որի հիշատակարանում գրի է առել Ծարում իր հայտնվելու հանգամանքները: Պարզվում է, որ Ծարը կրկին ապաստան է ծառայել թշնամական հաշվերաշդարից խուսափել փորձող հայ բնակչության համար: «Եւ ի յահէ նոցին փախըստեա եղեալ գնացաք յայլ յերկիր. և զյետամնացսն զեղին զոմն ի գեօղն թալանեցին և զոմն ի ճանապարհին: Եւ ես թաքօրս ի բարեաց գործոց եկեալ հասա ի յերկիրն Ծարայ, ի գեօղն որ կոչի Ապահէն: Եւ էր ի ժամանակս Պարսից նորընձա Փոքր շահ Ապասին, և ի հայրապետութեանն Էջմիածնայ հեզահոգի տէր Փիլիպպոսի բազմահանճար և սրբազան կաթուղիկոսի, և ի յԱղվանից հայրապետութիւն Գրիգորի քաջ և արի կաթուղիկոսի, և յաջորդութեանն ի յայսմ ուխտի ի տէր Ստեփաննոս արհիեպիսկոպոսի, որ է սպասաւոր և ժրաջան հովիւ ի սուրբ Դաղի վանից և մարդաղաւնեաց Ս. Նշանին. աստուած իւրեանն արքայութիւն տացէ և ընդ սուրբ հայրապետացն դասեսցէ, որ սա ձեռնադրեաց /անա/ըժանս... ի թուականութեանս հայոց ՌՃԱ /1652/ գրեցաւ, ծաղկեցաւ և կազմեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ.../շարունակությունը ընկած է/»[40]:

Ծար գավառի Ապահեն գյուղից Հովհաննես երեցը 1659 թ. գնացել է Գանձասար և հիշատակագրել. «առ ինչ քերականութեան արհեստս ծրագրեցի թեկամբ իմով»: Ուշագրավ է, որ սխալների համար թողութիւն խնդրելով, նա դրանք բացատրում է «տինա յոյժ վարանեալ և տաբակուսեալ կայ ի մտոքս վասն զբաղմանաց աշխարհիս»[41]: Եթե վերոհիշյալ Մովսեսը Ծար էր եկել Գորիսից, ապա նույն թվականներին Ծարից Էջմիածին էր գնացել Մատթեոս Ծարեցին և դարձել Փիլիպպոս կաթողիկոսի քարտուղարը՝ «նստար և սպասաւոր»: Իր ծաղկած Ավետարանի հիշատակարանում /1655 թ./ նա գրում է. «Արդ, ես՝ Մաթէոս դպիրս որ եմ յերկրէն Ծարայ, ի գեղջէն Չափարու, նստար էի տեառն Փի-

լիպպոս կաթողիկոսի, ելեալ գնացաք ի սուրբ Երուսաղէմ, և յանտէն դարձաք ի Ստամպօլ. և անդ ուսայ ի Մարկոս վարդապետէն զպատկերն: Աղաչեմ յիշել զՄաթոսս և զՄարկոս վարդապետն»[42]:

1670 թվականից հետո է գրվել Միւնեաց Ծար գավառի Ցրագետ անապատում Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթուղիկեայց» երկը, որի գրիչն էր Յովասափ Ըղուերծացին[43]:

1673թ. Ծար գավառի Դաշտակ գյուղում Եսայի Երէցի կողմից ընդօրինակվել է «Մաշտոց», որի ստացողն էր Տէր Բարսեղը[44]:

1684թ. Կուսանաց վանքի միանձնուհի Վարվառե կույսի կողմից արտագրված Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի (ստացող՝ Պետրոս վարդապետ) հիշատակարանում արժեքավոր վկայություններ կան երկրամասի քաղաքական պատմության վերաբերյալ: Ձեռագրի պատվիրատու տեր Պետրոս վարդապետը զավակն էր պարոն Մելիքպեկի և հարազատ եղբայրը՝ Մելիք Միրզախանի: Պարոն Մելիքպեկը որդին էր Մելիք Պալասանի, իսկ վերջինիս եղբայրն էր Ստեփաննոս արհիեպիսկոպոսը: Մելիք Միրզախանի մյուս եղբայրները, կրում էին բեկի տիտղոսներ՝ Սանուչար բեկ, Աթաբեկ, Ղարաբեկ և Հասան բեկ: Մելիք Միրզախանի ավագ եղբայր Աղաբեկը ձեռագրի գրության ժամանակ արդեն հանգուցյալ էր, իսկ ձեռագիրը գրվել է «ի երկիրս Ծար Փոքր Սխնիս կոչեցելոյ, ի սուրբ վանս Կուսանաց, ընդ հովանեաւ Դաղէի սուրբ Առաքեոյն և սուրբ Կաթուղիկէին և սուրբ Աստուածածնին և զամենազօր սուրբ Նշանին Մարդաղաւնեաց...»[45]:

1694թ. գրված հիշատակարանում, որ պահպնվել է Ավետարանի վերջում, ուշագրավ վկայություններ են արձանագրվել երկրամասի պատմության համար. «... Արդ, ի ժամանակի, յորում գնեցաք զկենսուրախ սուրբ աւետարանս, էին կաթողիկոսք ի տանս Աղուանից՝ երջանկափառ հայրապետքն՝ զտէր Երեմիայն և զտէր Սիմէոնն. զսուրբ Աթոռոյն Գանձասարայ և զմերումս նահանգի առաջնորդութեան զԴաղի վանից և զԽատի վանից՝ արհի և պանծալի ռաբունապետքն՝ զտէր Պետրոսն և զտէր Յովհաննէս, զտէր Բարսեղն և զտէր Գրիգորն և զտէր Աթանեսն և զտէր Ղազարն և զտէր Ստեփաննոսն, և իշխանն մեր՝ մեծափառ, աղօթասէր մէլիք Միրզախան: Աստուած զինքն հաստատուն պահեսցէ հանդերձ թագատրութեամբն և պարոն յորդեկօքն, ամէն: Գրեցաւ ՌՃԽԳ (1694) թուին, յունիսին ԺԹ (19) յամսեն, ի ժամանակի, յո-

ռում նորոգէաք զսուրբ Աթոռս Խատէի ասառուածափառ սուրբ ուխտս. ի դառն ամանակի, յորում նեղիմք ի բռնաւորաց վասն մեղաց մերոց, յիշել աղաչեմք ի բարեսիրացդ. բաւ է»[46]:

1696 թվականին գրված մի ինքնագիր հիշատակարանից պարզվում է, որ Աթանաս Ծայրեցին իր եղբոր՝ Բարսեղի, հետ ուխտավորությամբ այցելել է Երուսաղեմ. «ի թուահաշուց հայկականի հազարերերդ հարիւրեակի քառ տասն և թե հնգեակէ աւելի (1696) զոր Աթանաս իմ Ծայրեցի հանդերձ եղբորն իմ Բասիլի եկաք ի քաղաքս Կոստանդնի, որ է սայրեաց մայր քաղաքի, նախ և յառաջ է Բիւզանդի, կայսերական նախագահի:...Հոկտեմբերի մուտն ծիր, ի դրան տիրամօր Սուրբ Աստուածածնի՝ ի սուրբ Երուսաղէմայ ճանապարհի, որ և զաղօթս յիշողաց մեզ պաշար լիցի երկնածիգ ռահի ամեն» Երուսաղեմում պահվող թիւ 390 ձեռագրում թողած հիշատակարանում նույն Աթանաս Ծայրեցին նշում է. «նուաստ պարտաւոր բանասիրի Աթանասի Ծայրեցւոյ սկսեալ մատենիս Սրբոյ Գրիգոր Նիւսացւոյ ընթերցեալ յանկ ածի ՌՃԽԶ(1697) ի թուին, յորժամ ես և իմ եղբայր Բարսեղ վարդապետ Ս. Երուսաղէմ եկաք»[47]:

Մողք անվանում Ստեփաննոս արհիեպիսկոպոսի հիշատակին կանգնեցվել է մի խաչքար, որի վրա եղած արձանագրությունից պարզվում է, որ դեռևս 1701թ. Մելիք Միրզախանը կենդանի էր և շարունակում էր իշխել Ծարում և Մողքում. «Շնորհօքն աստուծոյ ես Պետրոս վարդապետ, Գրիգոր եպիսկոպոս, Մելիք Միրզախանս, որդիք պարոն Մելիքբէկին, թոռն Մելիք Պալասանին, կանգնեցաք սուրբ խաչս վրկութեան հոգւոյ Ստեփաննոս ահեպիսկոպոսին՝ հօր եղբօր հատուն մերոյ, ով ընթեռնոյք, աղաւթս յիշեցէք, թվ. ՌՃԾ(1701)[48]»:

18–րդ դարի առաջին քառորդին Ծարի ներկայացուցիչներին ևս ընդգրկված ենք տեսնում Արցախի ազատագրական շարժման նախաձեռնողների կազմի մեջ: 1721թ. ապրիլի 1–ին Խօթավանից առաջնորդ Պետրոս վարդապետը ևս ստորագրել էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանի և այլոց ստորագրությամբ ու կնիքներով Պետրոս Առաջինին ուղարկած նամակը[49]:

1728/1729թթ. է թվագրված թուրքական Սարու Մուստաֆա վեզիրի հրովարտակը, որով Ծարի և Մադավուզի հայոց գյուղերի բնակիչներին, գործակալներին, մելիքներին և գեղջավագներին

ծանուցված էր Եսայի Հասան–Ջալալյան կաթողիկոսի մահը և նրա փոխարեն Գրիգոր վարդապետի կաթողիկոսանալը: Այդ հրովարտակի մեջ Ծարի բնակիչներին դիմելու փաստը ինքնին վկայում է, որ այնտեղ դեռևս պահպանվում էին հայկական գյուղերը և այդ գյուղերը մտնում էին Գանձասարի թեմի մեջ:

Մաղավուզում պահվող մի ձեռագիր մաշտոց է նկարագրել Մակար եպս. Բարխուտարյանցը, որն ունեցել է 1729 թվականի հետևյալ հիշատակությունները. «Յիշատակ է բարեմիտ Յուրին, որ կոդակից էի Ավազակին ի երկրէն Ծարայ, ի գեղջէն Եանշաղէն...», «Ես Մըրչմանցի տէր Մելիքսեթի որդի Մարկոսըս... թիվն Ռ-ՃՀԸ (1729) էր»[50]:

18–րդ դարի առաջին քառորդի իրավիճակը ներկայացնող Իսքանդար Մունշիի «Թազքիրաթ–ալ–Մուլյուք» երկում Չուխուր–Սաադի /իմա՝ Երևանի խանություն/ թվարկված են Նախիջևան, Մակու, Զարուզբիլ (Ծար), Սաղարակ, Մաղասբերդ, Բայազետ և քրդական Շադիլու և Դումբուլի ցեղախմբերի երկու համայնքները (օլքաները)[51]: Նույն 18–րդ դարի երկրորդ կեսին, ինչպես ողջ Ծար գավառը, որ ենթարկվում էր Երևանի խանին, այնպես էլ Խութավանքը (Դաղի վանք) մտնում էին Էջմիածնի տիրույթների մեջ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը իր «Ջամբռ» աշխատության մեջ, որտեղ թվարկված են Էջմիածնի վանքի տիրույթները, հատուկ թվարկում է այն բոլոր գյուղերն ու կալվածները, որոնք գտնվում էին Ծարում ու Սողքում՝ Արեգունիի հարևանությամբ և որպես Խութավանքի կալվածներ, պատկանում էին Էջմիածնին (ընդհուպ մինչև Չափար գյուղն ու Խնքրավանքը): Սիմեոն Երևանցու հաղորդումը, որ վերնագրված է «Խութավանից որպիսութիւնքն», որպես առավել իրազեկ ու հավաստի սկզբնաղբյուրի և բերում ենք ամբողջությամբ.

«Վանքս այս...նախապէս հիմնավորեցաւ ի թոտջ... Ունի վիճակս զբոլոր երկիրն Քեօլանու, որոյ հայերէն անունն Ծարայ երկիր կոչի, որ է սահմանակից Խամսայու, բայց Էջմիածնի է վիճակեալ, և ընդ ձեռամբ Երևանու իշխողին: Որոյ գեօղօրայքն են այսոքիկ. Էրք, Ծնիլանց, Կարմիրշէն, Սալամալիք, Քաւթառանց, Ուռուցփոր, Ատարէնիս, Ծուղրուղաշէն, Հոսաբակ, Կաւալու, սոքա յայսկոյս լերինն են, կից Արեգունւոյն Գեղամայն: Իսկ յայնկոյս լերինն, Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճար, Ապահէն, Ճումէն, Քարատակ, Զուար, Մոս, Անաջուր, Ծովատեղ,

Խրանց, Հալուճ, Մութանց, երկու Դաւաչխուր, Մեծ և Փոքր Լև, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Երիցիշէն, Խաթավանք, Չափար, Կեարաք, Նորշէն, Խնքրավանք: Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով զԽնդրավանից անապատն և զԾարայ անապատն»[52]:

1805թ. ռուսական զորքերի Շուշի մտնելուց հետո սկսվում են հաճախանալ քրդական և մահմեդական այլևայլ ցեղերի ներթափանցումները Արցախ և, մասնավորապես, Ծար: Այսպես, 1807թ. նոյեմբերին մինչև 600 քրդեր դիմում են ռուսական իշխանություններին Արցախ (Ղարաբաղ) տեղափոխվելու խնդրանքով[53]: 1816թ. նոյեմբերին քրդական 1000 ընտանիք ևս դիմում են ռուսական զինվորական իշխանություններին կրկին Արցախում բնակություն հաստատելու խնդրանքով[54]:

1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումից հետո ռուսական իշխանությունների կողմից հովանավորություն վայելող Մեհտի Կուլի խանը սկսեց եռանդուն ջանքեր գործադրել ամայացած հայկական գյուղերի ու վանքերի կալվածների ու հողատարածքների յուրացման ուղղությամբ: Խանը և նրա ընտանիքի անդամները, օգտվելով ռուսական պաշտոնյաների կողմից տեղական իրադրության անիրազեկությունից, տարբեր պատրվակներով ու փաստարկումներով սեփականեցրին նաև այդ ժամանակ արդեն Քարվաճառ (Քելբաջար) կոչվող գավառի հողատարածքները, այդ թվում նաև Դաղի վանքի ու մյուս հայկական հինավուրց վանքերի կալվածքները:

1817 թվականին է վերաբերում Քեօլանի քրդերի և Գանձասարի վանքի միջև կնքված պայմանագիրը, որի հայերեն իսկագիրը (բնագիրը) պահպանվել է և բերվում է ստորև.

«Որովհետև Մադախիսու բոլոր մուլքն ջաղացատեղը և Եզնանիստը բնականաբար Գանձասարու սրբոյ Աթոռոյն վախմ են մատուցեալ ի ՈԼ /1181/ թուականին հայոց, և այն ժամանակ մինչև ցարդ վանքի ձեռացն է եղեալ, բայց ոմանք վարնորդք եկեալ են տարեալ վանքի նստող մեծավորէն և նոքա տուեալ են այն վարնորդացն և վանքի բաժինն ևս տուեալ են վանքին այսինքն՝ բահրան:

Ահա այժմ ՌՄԿԶ /1817/ թուին հայոց և մայիսի ԺԱ-ին եկան ԲՌՆԼ (2530) քեօլանի տաճիկք, որք են քեանդխուտայք ի ներքոյ գրեալքս, այսինքն՝ քեանդխուտա Հասանի որդի Հուսէյ Ա-

լին, քեանդխուտայ Ալահվերդի որդի Հախվերդին, քեանդխուտայ Ղաղիմի որդի Ղասումն, քեանդխուտայ Ալիֆին որդի Մամադն, քեանդխուտայ Թանկիվերդի որդի Նաղին: Խնդրեցին ի մէնջ, այսինքն՝ Սարգիս արքեպիսկոպոսէս Ջալալեցի, և մեք ըստ խնդրոյ վերոյ քեանդխուտայոցն տուաք Մատաղիսու տափն, որ է Մատաղիս, որ վարեն ե վանքի բաժինն, այսինքն՝ բահրէն տան և որժամ հողը կամենամք այլ վարողաց տամք և ոչ վերոյ գրելոց: Որովհետե նոքա այ(ս)տեղացի չեն և ոչ թէ վարնորդ: Այսպես եղև մեր վճիռն (հինգ ստորագրություններ պարսկատառ և մատնահետքերով կնիքներ)»[55]:

1828թ. Երևանի ու Նախիջևանի Ռուսաստանին միացումից և 1830–1840-ական թվականներին Այսրկովկասում ռուսական իշխանության ամրապնդումից հետո, Արցախի հոգևոր առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը ձեռնամուխ եղավ հայկական վանքերի, և մասնավորապես նաև Խութավանքի, կալվածատիրական խախտված իրավունքների վերականգնման դժվարին գործին՝ տարբեր վավերագրերով դատարանի միջոցով ապացուցելով վանքերի կալվածատիրական իրավասությունները: Այդ ուղղությամբ կատարած աշխատանքների մասին գրել է իր իսկ կտակի մեջ (10-րդ կետ). «Զանազան աշխատակրութեամբ և տառապանօք հանելով ի ձեռաց ժառանգաց Ախմետ խանին և Սեհտի — Ղուլի խանին և զանազան մասնաւոր անձանց յանուն Խոթայ վանից, այնինքն է վանքն Դաթէի զգաւառական Դաւթխու, Քարվաճառ, Ծար, Լևայ-ձոր, որ և Թուրթարի ձոր, ուրանոր են այժմ աւելի քան քառասուն և երկու շէն և ամայի գիւղօրայք և գիւղատեղիք և ամարանոցք վրանաբնակ թուրք ժողովրդեան, թողեալ եմ յաւիտենական յիշատակ հոգւոյն իմոյ և նախնեացս յօգուտ եկեղեցական իշխանութեան հանդերձ ամենայն վարելահողովքն և անտառօք: Թիւ հաստատուն բնակչաց տեղեացն այնոցիկ առ այժմ հասանէ ցերեք հարիւր գերդաստան: Ի միասին այնոցիկ կալուածոց գոն ի դիվանատան իմում և ի վիճակային կանսիստորիին Ղարաբաղու և յայլ տեղիս գործք և գրագրութիւնք և ցուցակք: Եթէ կամօքն աստուծոյ ապատ լիցին տեղիքն այնոքիկ ժամանակաւ, այնոքիկ կալուածք Խօթայ վանից կարեն բաւականանալ աւելի քան երկու հազար տուն բնակչաց»[56]: Բաղդասար միտրոպոլիտի կատարած աշխատանքի մասին ավելի լիակատար տեղեկություններ է հաղորդում նրա կրտսեր ժամանակակից

Գրիգոր Տէր–Հովհաննիսյանը (Մուրացան) Բաղդասար միտրոպոլիտի կենսագրությանն նվիրված իր հոդվածում. «Նախ և առաջ ի գործ դրաւ նա իւր ջանքերը Խոթավանքի մեծամեծ և ընդարձակ կալվածներն ու հափշտակուած սեփականութիւնները ազատելու Մեհտի Գուլի խանի դստեր և ուրիշ պարսիկ բեգերի ձեռքից: ...Այս կալուածները ընդհանուր անուամբ բոլորը միասին կոչվում են Դուքխու–Քեալբաջար և տարածվում են մինչև 140 000 դեսեատինի չափ, ձգուած Թաոքաո գետի հիւսիսային և հարաւային ափերի երկարութեամբ: Բացի բազմաթիւ ընդարձակ վարելահողերն, մեծամեծ անտառներն և մանր ու աննշան բնակութիւններն, Դուքխու–Քեալրաջառի մէջ գտնվում են հետեւեալ գիւղերը. Ծար, որ էր նախնի հայ իշխանաց բնակարանը, Չախմախ, Զագլիկ, Ղարախաչ, Գեեալինուչան, Գիռիղաշ, Մարալուչան, Բաղրբէյ, Ղլըշլու–Փարախկանլու, Հասանալլու, Ալխասլու, Լև (որ է ընդարձակ տարածութիւն մեծամեծ երկիրների, որոց մէջ գտնվում են թուով 12 գիւղեր), Բաղլուիաեայ, Չարաքդար, Քեշիշքէնդ, Քիլիսաերի (որ է ամարանոց թափառականաց), Բալլուբել, Մէյիտտար, Երկրորդ Ղլըչլու, Ղօթուռռու, Ղօշունալիլար, Ղօշտաջ, Ահաթաղ, Վարդանագոմք, Քիւպբուլնդ, Սուդայեան, Ղամիշլու, Այրում, Զիլֆիղարլու, Խանանլու, Ղարաջանլու, Բագիրգեան–բուլաղ և այլն:

Դուդխու–Քեալբաջարի և նրա սահմանակից զանազան լեռների վերայ և հովիտների մէջ գտնվում են նոյնպէս շատ վրանաբնակ թափառական ցեղեր, որոնք դարձեալ Խութայ վանքի հպատակ են համարվում, որպիսիք են քեանգեառլուեցիք, վաղահասցիք, Ղինլուներ, Ղարադաղլուներ, Ամիրալիլար, Ղարաղօյինլաբ, Գիւլկեազլու, Սհաթլու, Ղարվանդ, Շխավանդ, Սըրխ–ավանդ, և Բաֆրավանդ քէօհլանիք, Աքէմազլու, Ֆիրհասանլու և ուրիշ շատ պարսիկ ազգաբնակութիւններ»[57]:

Այդուհանդերձ, 19–բդ դարի երկրորդ կեսին, սակայն, Բաղդասար միտրոպոլիտի մահից հետո «վիճակային առաջնորդների անհոգութիւնից և տեղական հոգևոր կառավարութեան թուլութիւնից այդ կալուածներից շատերը հետզհետէ անցան և անցնում են Մեհտի–Ղուլի խանի Խուրշիդ դստեր, Դաւութ–աղա Աղալարովի և ուրիշ բէգերի ձեռք: 1851 թվականից սկսած մինչև 1873թ. վանքը այս կալուածներից ստացել է տարեկան աւելի քան 1500 ռուբլի արդիւնք..., իսկ 1874 թուից սկսած մինչև այժմ (իմա՝ 1880թ. — Պ.

Չ.) ստանում է 600 ռուբլի միայն, որովհետև կալուածների մեծ մասը այժմ վէճի մէջ է և արդիւնքը ստանում են ուրիշները: Եթէ այդ կալուածական վէճերը, որոնք դեռևս շարունակվում են Գանձակի նահանգական դատարանում կամ Տփխիսի դատաստանական պալատում, յօգուտ վանքին վախճան ստանան և կալուածները արժանապէս հոգացուին, այնուհետև Խութայ վանքի այդ սեպհականութիւնից հաշուով տարեկան կը ստացուի աւելի քան 10 000 ռուբլի, մի գումար, որ Շուշտյ հոգևոր դպրոցի վիճակը ընդ միշտ կապահովացնէ»[58]:

1890–ական թթ. սկզբին խոսելով Ծար գավառի բնակչության մասին, Մակար Բարխուտարյանցը արձանագրում է, «Գաւառումս այժմ մնացած են միայն երկու հայաբնակ գիւղ, երեսուն գիւղից աւելի մնացեալ հայ գիւղերի աւերակներն, որոց շատերին մէջ այժմ տեղակալած են աւազակաբարոյ Քեօլանի անուն մահմետականներ»[59]:

Քարվաճառի տարածքը (համաձայն սկզբնաղբյուրների), վաղագույն ժամանակներից բնակեցված է եղել միայն հայ բնակչությամբ: Չնայած Հայաստանում պարսկա–արաբական, սելջուկյան, իսկ ապա և մոնղոլական ու պարսկա–թուրքական երկարատև գերիշխանություններին, Ծարի տարածքում հայտնաբերված մինչ 20–րդ դարն ընկած ժամանակաշրջանին պատկանող մշակութային հուշարձանները միայն հայկական են: Առաջին հեղինակը, որ արձանագրում է քրդերի զանգվածային ներթափանցման փորձի մասին, Զաքարիա Քանաքեռցին է, և այն էլ ոչ թե անմիջապես Ծար, այլ նրան հարակից Քաշաթաղ (Լաչին): Ըստ Զաքարիա Քանաքեռցու, ներգաղթած քրդական այդ ցեղը կամ տոհմը, դեռևս չէր հիմնավորվել որևէ գյուղում, այլ ապրում էր քոչվորական կենցաղով: Հայ բնակչության հետ ունեցած նրանց ընդհարումները հայերի կողմից հաջողվում է լուծել պարսից իշխանությունների միջնորդությամբ և վրեժխնդիր լինել նրանցից: Զաքարիա Քանաքեռցու հաղորդումը ուշագրավ է մի շարք առումներով, ըստ այդմ այն բերում ենք ամբողջությամբ.

«Իբրև լուաւ խանն Թահմազ–ղուլի, թէ՝ մօտեալ է Օսմանցին գալ յերկիրս Արարատեան, հրաման եհան ամենայն աշխարհին Երևանայ՝ ցրուել և գնալ, ուր և կամիցին՝ փախիցեն, զի Օսմանցին եկեալ աւեր տեսցէ և ոչ կարգեաց նոցա վարիչս և ասէ, ամենեքեանքն իւրեանց կամօքն գնասցեն ուր և կամին: Եւ ելին ի

բնակութենէ իւրեանց և ցրուեցան, ոմանք յաշխարհն Վրաց, ոմանք՝ յԱղուանս, ի Զական, ի Գեանճայ, ի Խաչէն, ի Վարանդ, և այլ ուր և կարացին: Իսկ կարբեցիքն ելին միահաղոյն ի վարդավառի բարեկենդանի շաբաթի օրն և դիմեցին դէպ յերկիրն Քաշթաղու և հասին մինչ ի գիւղն Հօչէս: Եւ անդ բնակեալ էին սեաւ վրանօք բազում տունք քրտաց, իբրև տեսին զնոսա և ասացին, սոքա փախստականք են, եկայք կոտորեսցուք զսոսա և կողոպտեսցուք զինչսն: Իսկ կարբեցիքն իմացան զխորհուրդս քրտացն, զինեցին նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ և անկան քուրտքն ի վերայ կարբեցւոցն սաստիկ բախմամբ և սպանին Ե (5) այր... Զի թէպէտ և կարբեցիք ևս սպանին ի նոցանէ, սակայն յաղթեցան, քանզի նոքա հանգիստ էին և անաշխատ, և սոքա՝ վաստակեալք և անպատրաստ, և կողոպտեցին զնոսա... Եւ քուրտքն այնոքիկ էին *դաւանութեամբ* Օսմանցւոց, վասն այն այսպէս պնդութեամբ պատուէր ետ շահն ի նախատինս ազգին: Եւ ընկալել զպատուէրս զայս զօրականացն, գնացին նախ առ կարբեցիսն, և նոքա եկեալ և անկան յոտս զօրականացն, լացին գոռալով և աղաղակէին և ցուցանէին զմերկութիւնս իւրեանց: Իսկ զօրականքն գրեցին զամենայն, զոր ինչ վնասեալ էին առ քրիստոնեայսն... և ապա ելեալ գնացին առ քուրտսն... և ոչ մնաց փոխարէնն, զոր ոչ ընկալան ի զօրականացն բազմապատիկն: Քանզի կալան զարսն քրտացն ամենայն և կապեցին զձեռս յետս ամենեցուն և ձաղէին անողորմ և զկանայս նոցա ապականէցին խայտառականօք, յավիշտակեցին և կողոպտեցին զինչսն և զստացուածսն և թափուր արարին յամենայնէ: Եւ ապա կոչեցին զկարբեցիսն և բաժանեցին առ նոսա զինչս քրտացն և զգերեալ մանկունս յետս դարձուցին և զարեան գինսն սպանելոց առին ինքեանք... Եւ այսպէս եղաւ զրաւ գործոյն և մնացին անդէն կարբեցիք մինչև էառ շահն զԵրևան և ապա դարձան և եկին և բնակեցան ի գիւղն իւրեանց Կարբի»[60]: Այս վկայությամբ հաստատվում է, որ Քաշաթաղ մուտք գործած քրդերը ապրում էին վրաններում, չէին վայելում պարսից իշխանությունների հովանավորությունը և մուտք չէին գործել Ծար: Զաքարիա Քանաքեռցու Պատմության մեջ պահպանվել է ևս մի կարևոր վկայություն, որը կարող է նպաստել Ծարի իշխանության հետագա ճակատագրի բացահայտմանը: 1679թ. հունիսի 4–ին Արարատյան երկրում տեղի ունեցած երկրաշարժից հետո, Երևանի խանը սուրհանդակի միջոցով անմիջապես տեղեկացնում է շահին

այդ մասին և, ինչպես գրում է Զաքարիան, «յետ Եժան (15) աւուր եկն փութագնացն և հրաման՝ շինելոյ բերդին և եկեղեցեացն, և մունետիկն գոչէր, թէ հրաման է շահին, զի քրիստոնեայք շինեսցեն զեկեղեցիսն՝ զոր քակեալ է, և յայսմ պատճառէ շինեցաւ ի բազում տեղիս եկեղեցիք, թէ ի նորա ժամանակին և թէ յետ նորա... Եւ ապա եկն մեծ իշխան Սիրզայ Իպրահիմն, զոր ասէին Հատրբէճան–վազրի, նստաւ յԵրեան, և կոչեաց զմերձակայ ղանորայս. զՆախչուանայ, զՊար(տ)աւայ, զՁակամայ, զԼոռոյ և զսուլթանսն զՍակուայ, զԱկուռոյ, զՍատարակայ, զԾարայ: Եւ եկին սոքա և շինեցին զբերդն երեքորմեայ ամրագոյն քան զառաջինն: Եւ զկամուրճն՝ որ ի ներքոյ բերդին էր ի վերայ Հուրաստան գետոյ, որ ասի Զանկի, զնա ևս շինեցին ամրագոյն»[61]:

Այս վկայության հիման վրա ևս կարելի է թերևս պնդել, թե Ծարում և Սողքում իշխող մելիք Սիրզախանը պարսից արքունիքում դիտվում էր որպես սուլթան: 18–րդ դարի սկզբում արդեն նկատելի է նման տոհմերի կամ ցեղերի քանակային աճ, որոնք տարածաշրջանում վերածվում են պարսկա–թուրքական տիրապետության համար էթնիկ և սոցիալական հենարանի: Հատկապես այդ հենարանի թուլացմանն էր ուղղված այն պայքարը, որը սկսեց Դավիթ բեկը՝ Սիսիան ժամանելուց անմիջապես հետո: 1725թ. գրված նամակում արդեն Հայաստանի հյուսիս–արևելյան գավառների թվարկման ժամանակ սկսվում է կիրառվել Քոլանի անվանումը, որը մեր կարծիքով օգտագործվում է Ծար–Քարվաճառի նշանակման համար: Եկատերինա Առաջինին ուղղված նամակում Արցախի կաթողիկոսներն ու մելիքները գրում են. «այս երկրներս, որ ծառայքս քո բնակեալ եմք, որ են Գանջայ, Ղարապաղն, Զ միալ, այլև Գեղարքունի, Քոլանի, Ղափան, Սիսիան և այլ երկրներ, այս ամէն միալ Լ(30), Խ(40), Ծ(50) փարա գեղ է, և ամէն գեղ Զճ (600) տուն, Եճ (500), Դճ(400), Բճ(200), մէկ ճ(100) տուն, Ծ(50) տուն, փոքր Լ(30), Խ(40) տուն են, և այս երկրներս սարով և տեղով շատ ամուր են, և մենք այս խալղս ամէքն իւր երկրումն սղղնաղ եմք արել ամուր տեղերն և ամէքս մէկ սղնաղին վերա նստած պահում եմք: Եւ մեր Դ(4) կողմի երկրներ օսմանցիք առել են, որ մեզ թշնամիք են, այլ և մեր մէկ կողմն էլ ղզլպաշ են, որ թշնամիք են...»[62]:

Նադիր շահի թագադրման արարողություններին մասնակցելուց հետո, իր Աթոռը վերադարձող Աբրահամ Կրետացի կաթո-

ղիկոսը այցելում է «Խնձորեկ, որ է ի մէջ քարաժեռ լերանց մեծամեծաց, և ունի անբաւ բարձրութիւն: Եւ նեղանցուկ ճանապարհաւ իջանք ի մէջ ձորոյն և տեսանք հիանալի բան՝ *և զգեղն. բողեալ էին, որ էր ի մէջ ձորոյն, վասն ահի օսմանցոց և դարայչօղուց քրքերոյն և ի բարձրբերձ տեղիս այս կողմն և այն կողմն ձորոյն դէմ. յանդիման միմեանց փորեալ յապառաժ վէմս քարայր. որք են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւր տան բնականութեան շինեալ բնակէին*»[63]: Աբրահամ Կրետացու այս վկայությունը ևս հաստատում է այն իրողությունը, որ 1730–1734թթ. թուրքական ռազմակալման ժամանակ որոշ քանակով օսմանցիներ ու քրդեր են տեղափոխվել Հայոց հիշյալ գավառներ և հետզհետե ներթափանցել նաև լեռնային բարձրավանդակները: Եթե 17–րդ դարի առաջին կեսին Երևանի Ամիրգունա խանի կառավարման շրջանում խստորեն փորձում էին կասեցնել քրդերի արշավանքները Երևանի խանության տարածք, ապա հետագայում այդ ներխուժումները դարձան ավելի հաճախակի, որին նպաստեց նաև իշխանությունների թողտվությունը: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ, Մասիսից հարավ գտնվող քրդերը լսելով Ամիրգունա խանի հիվանդության մասին, միավորվեցին և որոշեցին կողոպտելու համար արշավել Շարուրի դաշտ: Ամիրգունա խանը, տեղեկանալով այդ մասին, սուրհանդակով պատվիրում է իր որդուն՝ Թահմասպ բեկին, դիմագրավելու նրանց: Թահմասպ բեկը շուտավտույթ, իր հեծյալներին նույն օրն իսկ նախ դիմում է դեպի Գեղամա երկիր, հաջորդ օրը՝ Վայոց ձոր, և այդտեղ ևս չհանդիպելով քրդերի, անցնում է Վեդի կոչված դաշտը: Տեսնելով, որ մարերի բազմությունը ծածկել է ողջ հարթավայրը, նա անվախ մարտի է կոչում իր հեծյալներին, սակայն նրա զորքը դժգոհ լինելով ստացած սննդամթերքից կամ վարձատրությունից, հապաղում է մարտի մեջ մտնելուց: Սակայն իրենց հրամանատարի քաջությունը տեսնելով, որ փոքրաթիվ զինակիցներով նետվել էր մարտի և սկսել կոտորել քրդերին, մնացածները ևս մտնում են մարտի մեջ, հաղթում և հետապնդում փախչող հակառակորդին ու կոտորելով մեծ մասին, դուրս են քշում երկրի սահմաններից[64]:

Չելեբի–զադեն 1730–ական թվականների մասին գրում է. «Հիշյալ սղնախցիների ոչնչացումից հետո այդ շրջանի լեռներում գտնվող նրանց կողմնակիցներից Կարաչոռլի քուրդերը, շահսեվենցիները և ուրիշներ անձնատուր եղան: Իրենց աշիրեթների մեջ

ապրելու և սրանից հետո հայերի հետ չկապվելու պայմանով սրանց համար հրամանագիրներ գրվեցին և Կարաչոռլի աշիրեթի երկրում գրանցում (մարդահամար) տեղի ունեցավ, կայսերական խասերը և միրլիվայի խասերը առանձնացվեցին, ստացված արդյունքի (եկամուտի) կեսը իրենց իրրև ապրուստի միջոց, իսկ կեսը՝ Գենջեի գանձարանին հանձնելու պայմանով իբրև սանջակ տրվեց Մեկբան–օղլու–Մուհամմեդ բեյին...»[65]: Այդ նշանակում է, թե տարբեր ուղիներով ներթափանցած քրդերը օսմանների դեմ պայքարում հայերի դաշնակիցներն էին:

Այսպիսով քրդերի մուտքը թեև արձանագրվում է դեռևս 18–րդ դարում, սակայն զանգվածային ներհոսք կատարվել է հիմնականում 19–րդ դարի առաջին կեսին և վանքապատկան հողերի վրա նրանք բնակվում էին միայն վարձակալական հիմունքներով: Էթնիկական գերակշռությունը գավառում հայերը սկսել են զիջել միայն 19–րդ դարի կեսերից սկսած: 19–րդ դարի երկրորդ կեսին և հատկապես դարավերջին եկեղեցին փաստորեն զիջում է նաև իր հողային–կալվածատիրական իրավունքները:

PAVEL CHOBANYAN

ABOUT ETHNIC PROBLEM OF KARVACHAR

Until 19 centuary Armenians had been the only inhabitants of Karvachar. Thus, although there is evidence of kurds' first entrance in Karvachar in the 18th centuary, however, their mass inflow took place, in particular, in the first half of the19th century and they lived on the abby's lands as tenants. Armenians began to lose their ethnic majority since the mid of the 19th century The church virtually, also lost i'ts land and landowner rights in second half of the 19 th century and, especially, at the end of the century.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ս. Կարապետյան. Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին ընդակցված շրջաններում. Երևան,«Գիտություն», 1999. էջ 8–124:**

1.1 **Մ. Բարխուտարյանցը հստակ առանձնացնում է Վայկունիքը կամ Վերին Վայկունիքը Ծար գավառից, թեև հաճախ, նրանք նաև նույնանում են /Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ. Եր., «Գանձասար», 1999, էջ 173:**

2. **Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի». Երևան, 1963, էջ 82:**

3. Պատմութիւն Սեբեոսի. Աշխատասիրությամբ Գ. Վ.. Արգարյանի, Եր. 1979, էջ 88:
4. Նույն տեղում:
5. Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Եր., 1983, էջ 340: Բ. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը 10–16–րդ դարերում, Եր., 1975, էջ 64–73:
6. «Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դարեր». Աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 41:
7. Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Եր., 1983, էջ 340:
8. Դիւան հայ վիմագրության. հ. 4, Եր., 1973, էջ 334:
9. Նույն տեղում, էջ 340–341:
10. Ստեփաննոս Օրբելեան. Պատմութիւն տանն Սիսական. էջ 310:
11. Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալէքսանդրապոլ, 1910, էջ 221:
12. Տես Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 353:
13. Նույն տեղում:
14. Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 536:
15. Դիվան հայ վիմագրության, հատոր 5, էջ 198:
16. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Կազմեց Ա. Խ. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 228–229: Հմմտ. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 134:
17. Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960, էջ 12:
18. Шихаб ад–Дин Мухаммад ан–Насави, История султана Джалал ад–Дина Манкабурну. Баку, 1973, с. 211–212.
19. Ստեփաննոս Օրբելյան. Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 263:
20. Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն հայոց. Եր., 1961, էջ 322–328:
21. ՄՄ, Կաթող. դիւան, թղթ. 240, վավ. 159:
22. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ,. Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Եր., 1950, էջ 207:
23. Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 220:
24. ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, Եր., 1955, էջ 275–276:
25. ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 24:
26. Նույն տեղում, էջ 122–123:
27. ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ,Եր., 1958, էջ 66:
28. Նույն տեղում, էջ 344:
29. Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթուղիկե Էջմիածնի և հինգ գավառացն Արևսրատայ, Էջմիածին, 1842, էջ 359: Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր.,1957, էջ 458:
30. Մանր ժամանակագրություններ, 12–18–րդ դարեր, կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Եր., 1956, էջ 275, ծ. 34:
31. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 240, վավ. 134:
32. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 244–245: Բնագրի հրատարակիչ Վ. Հակոբյանի ծանոթագրումը, որին հետևել է նաև Առաքել Դավրիժեցու

Պատմության բնագրի հրատարակիչ Լ.Ա.Խանլարյանը, թե «Սա Դաղի վանքը չէ, որ գտնվում է Թարթառ գետի ձախ կողմում, Խաթրավանքից բավական վերև,և կոչվում է նաև Խութա կամ Գոթալ վանք...ստույգը՝ Թաղեի վանք, որ գտնվում է պատմական Աղահեճ գավառում /Փոքր Սյունիք/», հիմնավորված չէ/տես նույն տեղում, էջ 253, ծ. 24/: Ուստի ճիշտ չէ նաև Ա.Դավրիժեցու Պատմության բնագրում Դաղիու ձևի փոփոխումը Թաղէու ձևով, երբ «բոլոր բնագրերում պահպանվել է Դաղիու ձևը»/Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Եր., 1990, էջ 534 ծան. 446/:

33. «Տպել» բնակավայրի տեղորոշման մասին տես Ա.Հ.Հակոբյան, Հ.Ե.Սիմոնյան, Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և «Տպէլի» տեղադրության հարցը,— «Պատմա-բանասիրական հանդես», 1998, թիւ 1–2, էջ 230–231:
34. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հատոր Ա, Եր., 1974, էջ 218–219:
35. Նույն տեղում, էջ 736:
36. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հատոր Բ, էջ 443:
37. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հատոր Գ, Երևան, 1984, էջ 601–602:
38. Նույն տեղում, էջ 261–262:
39. Նույն տեղում, էջ 262:
40. Նույն տեղում, էջ 489:
41. Նույն տեղում, էջ 865:
42. Նույն տեղում, էջ 654–655:
43. ՍՄ, ձեռ. 4074:
44. ՍՄ, ձեռ. 3601:
45. ՍՄ, ձեռ. 2067, էջ 470–471: Հիշատակարանի հրատարակությունը տես Լեո, Հայոց պատմություն, հ. 3, մասն 2, էջ 28–29:
46. «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, կազմեց Ե.Լալայեան, Թիֆլիս, 1915, էջ 998–1000:
47. Տես Բ.Մարգիսեան, Ցուցակ..., Բ, էջ 132–134: «Սիոն», 1927, էջ 178–182:Սկրտիչ եպս. Աղավնունի,. Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի,Երուսաղէմ, 1931, էջ12:
48. «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 332:
49. "Армяно—русские отношения в первой трети 18—го столетия", т. 11, ч.1, Ереван, 1964, с. 383.
50. Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ Երևան, 1999, էջ 275:
51. Տես И.П.Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в 16—начале 19 вв. Ленинград, 1949, с.143.
52. Սիմէոն Երևանցի. Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 283–284:
53. Տես АКАК, հ. 3, էջ 443:
54. АКАК, հ. 6, էջ 834: Տես նաև Խ.Մ.Ջատոև, Ռուս-քրդական հարաբերությունների պատմությունից,— «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Քրդագիտություն. Երևան, 1985, էջ 71:
55. ՍՄ, Կաթ. Դիվան, թղթ. 240, վավ. 86:

56. Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի /4–1838–1913/, Թիֆլիզ, էջ 174:
57. «Փորձ», 1880, հ. 5, էջ159–160:
58. Նույն տեղում, էջ 160, ծան. 1:
59. Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 265:
60. Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն. հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 8–10:
61. Նույն տեղում, էջ105:
62. Армяно–русские отношения в первой трети 18–го века. Т. 2, ч,. 2, Ереван, 1967, с. 249.
63. Աբրահամ Կրետացի. Պատմության, Երևան, 1973, էջ 150:
64. Հավանաբար այս ընդհարման արձագանքներն էին հասել Իտալիա, որտեղ այդ մասին տեղեկանում է նաև Նախիջևանի Օգոստինոս Բաջենց եպիսկոպոսը 1630 թ.: Տես Հ. Սահակ Ճեմճեմեան, Նախիջևանի հայոց վարժարանը և Հռոմը, Վենետիկ, 2000, էջ 84:
65. «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին». հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրասյան, Եր., 1961, էջ 159: